

# ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ



## ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾՆԵՐԻ ԵՎ ՖԻԿՏԻԱՆԵՐԻ ԷՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՅԱՅՏՄԱՆ ՏԵՍԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ \*

ՀՏԴ 340.1

DOI: 10.52063/25792652-2023.1.16-45

### ԳԵՎՈՐԳ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի  
քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,  
Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի օգնական,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[gevorgbarseghian@gmail.com](mailto:gevorgbarseghian@gmail.com)  
ORCID: 0000-0002-5642-7658

### ՄԱՐԻՆԱ ՄԱՔՅԱՆ

Երևանի պետական համալսարանի  
իրավագիտության ֆակուլտետի մագիստրոս,  
Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
դատավորի օգնական,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[marinamagyan21@gmail.com](mailto:marinamagyan21@gmail.com)  
ORCID: 0009-0004-2621-977X

Իրավական հետևանքների առաջացման համար իրական փաստական հանգամանքներից զատ կարևոր նշանակություն ունեն փաստական հանգամանքների վերաբերյալ օրենսդրորեն թույլատրելի ենթադրությունները՝ իրավական կանխավարկածները և ֆիկցիաները:

Կանխավարկածների և ֆիկցիաների առանձնահատկությունների ու հարաբերակցության անբավարար ուսումնասիրությունը դժվարություններ է առաջացնում իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայում:

Սույն հոդվածի նպատակը իրավական ֆիկցիաների և կանխավարկածների առանձնահատկությունների և հարաբերակցության հետազոտումն է:

Դրված նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- իրավական կանխավարկածների և ֆիկցիաների էության ուսումնասիրում, դրանց ընդհանրությունների և առանձնահատկությունների վերհանում,
- իրավական կանխավարկածների և ֆիկցիաների հարաբերակցության ուսումնասիրում,
- իրավական ակտերում կանխավարկածների և ֆիկցիաների ամրագրման և պրակտիկայում դրանց կիրառման կատարելագործմանն ուղղված առաջարկների մշակում:

\* Հոդվածը ներկայացվել է 12.02.2023թ., գրախոսվել՝ 06.03.2023թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2023թ.:

**Հետազոտության օբյեկտը և առարկան դիտարկվել են գիտական ճանաչողության այնպիսի ընդհանուր (համագիտական) և հատուկ մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են դոգմատիկ, իրավահամեմատական, տրամաբանական վերլուծության և իրավական մոդելավորման մեթոդները:**

**Իրականացված հետազոտության արդյունքում կատարվել են մի շարք եզրակացություններ, որոնց հիմնական բովանդակությունը հանգում է հետևյալին.**

**Իրավական կանխավարկածը և ֆիկցիան նմանատիպ գործառույթներ են կատարում իրավական կարգավորման գործընթացում: Դրանց գոյությունը պայմանավորված է օրենսդրության բացերը հաղթահարելու, հասարակական հարաբերություններում անորոշությունը վերացնելու անհրաժեշտությամբ: Իրավական ֆիկցիաների և կանխավարկածների գոյության իմաստը ենթադրության օգնությամբ այնպիսի իրավական հետևանք առաջացնելն է, որը սովորաբար առաջանում է իրադարձության կամ գործողության արդյունքում. դրանք փոխարինում են իրավական փաստերին՝ ծառայելով անորոշության հաղթահարմանը: Ֆիկցիան ու կանխավարկածը դուրս են իրականությունից. դրանք իրական աշխարհում գոյությունն չունեն, սակայն իրավական իրականության անբաժան մասն են:**

**Միևնույն ժամանակ, դրանց փոխհարաբերության վերլուծությունը ցույց է տվել, որ առկա նմանություններով հանդերձ՝ այս նորմատիվ ընդհանրացումները տարբեր են: Կանխավարկածը հերքելի է, իսկ ամրագրվող ենթադրությունը հավանական բնույթ ունի, մինչդեռ ֆիկցիան անհերքելի է, իսկ ֆիկցիայով սահմանված դրույթը՝ կեղծ: Կանխավարկածն ունի ինդուկտիվ բնույթ՝ թերի ինդուկցիայի ձևով, իսկ ֆիկցիան՝ դեդուկտիվ: Ֆիկցիայի կիրառման նպատակը գիտակցաբար իրականությանը չհամապատասխանող դատողությունը ճշմարիտ ճանաչելն է, որը չի հետապնդում ճշմարտության հաստատման նպատակ. դրա հիմնական նպատակը այն հարաբերությունների կարգավորումն է, որոնք այլ կերպ չեն կարգավորվում: Կանխավարկածները հաստատում են անհրաժեշտ իրավական փաստը՝ ելնելով դրա գոյության հավանականությունից:**

**Սույն աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքների հիման վրա՝ առաջարկվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը լրացնել իրավական կանխավարկածների և ֆիկցիաների կիրառման վերաբերյալ նոր հոդվածով: Առաջարկվող լրացումը իրավական նորմերի մոդելավորման տեսանկյունից կունենա ուղղորդիչ նշանակություն: Այդ լրացումամբ հնարավոր կլինի ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտը իրավական կանխավարկածների և ֆիկցիանների կիրառման առումով ենթարկել համակարգային և համապարփակ կարգավորման:**

**Հիմնաբառեր՝** իրավական կանխավարկած, իրավական ֆիկցիա, նորմատիվ ընդհանրացում, իրավական իրականություն, անորոշության հաղթահարում, իրավաբանական տեխնիկա, ենթադրություն, հավանականություն, հերքելի/անհերքելի բնույթ:

## Նախաբան

Իրավաստեղծ գործունեության դիսամիզմի պայմաններում, ինչը պայմանավորված է հասարակական հարաբերությունների շարունակական զարգացմամբ և բարդացմամբ, իրավական կանոնակարգման կարիք ունեցող նոր օբյեկտների և ինստիտուտների ի հայտ գալով, անհրաժեշտ է իրավական տեխնիկայի միջոցների ռացիոնալ օգտագործում: Օրենսդրի կողմից իր կամքը ձևակերպելու

համար իրավական տեխնիկայի միջոց օգտագործվող ամենատարածված իրավական երևույթներից են իրավական կանխավարկածներն ու իրավական ֆիկցիաները:

Իրավական հետևանքների առաջացման համար, այդ թվում՝ իրավահարաբերությունների ծագման փոփոխման, դադարման, իրական փաստական հանգամանքներից զատ, կարևոր նշանակություն ունեն նաև օրենսդրորեն թույլատրելի ենթադրությունները՝ իրավական կանխավարկածները և ֆիկցիաները:

Մարդու կենսագործունեության բոլոր ոլորտներում միշտ եղել են, կան և կլինեն հանգամանքներ, երևույթներ և իրադարձություններ, որոնց արժանահավատության մասին կարելի է խոսել միայն հավանականության որոշակի աստիճանով: Այդ է պատճառը, որ իր գործունեության մեջ մարդը օգտագործում է որոշակի փաստերի առկայության կամ բացակայության մասին ենթադրություններ: Նման ենթադրությունները գիտության մեջ ընկալվում են որպես սոցիալական կանխավարկած (Мосин 7), իսկ իրավական կանխավարկածները դրանց տարատեսակն են: Ավանդաբար ընդունված է համարել, որ իրավական կանխավարկածներն առաջացել են անտիկ աշխարհում և հաճախ օգտագործվել են հռոմեացի իրավաբանների աշխատություններում: Հռոմեական իրավունքը կանխավարկածներին տալիս էր ռացիոնալացնող գործառույթ իրավակիրառ գործընթացում. դրանք կողմերին ազատում էին որոշակի փաստերի ապացուցումից և հավասարաչափ բաշխում էին այդ փաստերի հերքման բեռը (Мейер 43-44):

### Իրավական կանխավարկածների Եռությունը

**Կանխավարկած (praesumptio)** լատիներենից թարգմանաբար նշանակում է բարձր հավանականություն ունեցող ենթադրություն: Իրավական կանխավարկածի հիմնական հատկանիշներն են նորմատիվությունը, հավանականությունը, հերքման հնարավորությունը, իրացման հատուկ մեխանիզմը, տարբեր շահերի (անձի, հասարակության, պետության) պահպանմամբ դրսևորվող նպատակային բաղադրիչը:

Հնարավոր իրավական հետևանքների տեսանկյունից իրավական կանխավարկածները պայմանականորեն բաժանվում են երկու հիմնական խմբի՝ դրական և բացասական կանխավարկածների: Զաղաքացիական իրավահարաբերություններում առավել հաճախ կիրառելի են բացասական կանխավարկածները: Այսպես, պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, որպես կանոն, ենթադրվում է այն անձի մեղքը, որի վրա դրված էր կատարման պարտականությունը: Զրեական դատավարությունում գործում է հայտնի անմեղության կանխավարկածը (praesumptio bona viri), ըստ որի, հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, հոդված 17): Կանխավարկածի՝ օրենսդրորեն ամրագրման տեսանկյունից ողջունելի է ՀՀ քրեական օրենսգրքում տեղ գտած կարգավորումն առ այն, որ սույն օրենսգրքը հիմնվում է արարքի հակաիրավականությունը գիտակցելու կամ դա գիտակցելու կարողության կանխավարկածի վրա (ՀՀ քրեական օրենսգրք, հոդված 23):

Հայ իրավական մտքում իրավական կանխավարկածների կիրառումն ունի բավականին խոր արմատներ. այն կիրառվել է նաև Մխիթար Գոշի կողմից իրավական որոշ նորմերի կառուցման համար: Այսպես, Մխիթար Գոշի Դատաստանագրքի՝ «Վանահայրերի և անապատականների մասին» վերտառությամբ «Գ» գլխի համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ իշխանների կողմից վանահայրեր կարգելու դեպքում հոգևոր եղբայրակցության կամքը ենթադրվել է, այլ խոսքով՝ այս դեպքում գործել է հոգևոր եղբայրակցության կամքի (համաձայնության) առկայության կանխավարկածը, քանի դեռ հակառակը տեղի չի ունեցել (հակառակը

չի ապացուցվել): Դատաստանագրքի էջերում կարելի է գտնել կանխավարկածի այլ օրինակներ ևս (Դատաստանագիրք, գլուխ Գ):

Ըստ Վ. Կ. Բաբանի կողմից ձևակերպած այս հասկացության ամենահայտնի սահմանումներից մեկի՝ իրավական կանխավարկածը իրավունքի նորմերում ամրագրված ենթադրությունն է իրավաբանական փաստերի առկայության կամ բացակայության մասին, որը հիմնված է դրանց և առկա փաստերի միջև կապի վրա և հաստատվում է նախորդող փորձով (Бабаев 91): Այս սահմանումը բացահայտում է իրավական կանխավարկածների ծագումը, սակայն այն չի նշում դրանց հիմնական հատկանիշներից մեկի՝ հերքման հնարավորության մասին, ինչպես նաև չի հիշատակվում կանխավարկածների կիրառման նպատակը:

Կանխավարկածը պայմանականորեն ընդունվում է որպես ճշմարիտ դրույթ, քանի դեռ հակառակն ապացուցված չէ: Այս ենթադրության ճշմարտացիության հավանականությունը կարող է լինել և՛ նշանակալի՝ հաճախ ստանալով բացարձակ բնույթ, և՛ աննշան: Կանխավարկածների հավանական բնույթն էլ տալիս է հերքման հնարավորություն՝ ապացուցելու, որ կանխավարկածի ընդհանրացման հիմք հանդիսացող փաստերից տարբերվող կոնկրետ փաստի նկատմամբ կանխավարկածը չի գործում, ինչը նշանակում է, որ տվյալ փաստը չի հանգեցնում որևէ իրավական հետևանքի: Երբ խոսում ենք իրավական կանխավարկածի հերքման մասին, նկատի չունենք ընդհանրապես հրաժարում նման ենթադրությունից, այլ միայն բացառում ենք նման ենթադրության կիրառումը կոնկրետ դեպքում: Կոնկրետ գործով կանխավարկածի կիրառելի չլինելու ապացուցումը կասկածի տակ չի դնում այդ ենթադրության բովանդակությունն ընդհանուր առմամբ, այն շարունակում է գործել նաև հետագայում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրա կիրառումը բացառելու բացառիկ անհրաժեշտություն է առաջանում: Իրավական կանխավարկածների հիմնական իմաստն այն է, որ այն կլանում է միատարր երևույթների ճշող մեծամասնությունը, բայց ոչ բոլորը: Ուստի, մեր կարծիքով, կանխավարկածը իրավաբանական տեխնիկայի միջոց է, որը կիրառվում է տարբեր շահերի (անձի, հասարակության կամ պետության) պաշտպանության նպատակով, և դրա միջոցով իրավական նորմերով ամրագրվում է հավանական ենթադրություն, որը համարվում է ճշմարիտ, քանի դեռ ապացուցված չեն այն փաստերը, որոնք հերքում են այն:

Կանխավարկածը չի պահանջում ամրագրված ենթադրության ապացուցում: Իրավական կանխավարկածը ենթադրում է օրենսդրական ամրագրում, ինչի արդյունքում այն ձեռք է բերում իմպերատիվ բնույթ և չի պահանջում հաստատում, ինչպես այլ իրավական փաստերի դեպքում է: Վ. Ի. Կամինսկայան նշում է. «Օրենքով սահմանված կանխավարկածը ոչ միայն հանգեցնում է այս կամ այն դրույթի արժանահավատության ճանաչման առանց դրա ապացուցման, այլև այդ ճանաչման հետ կապում է որոշակի իրավական հետևանքներ» (Каминская 132): Ինչպես նշում է Վ. Ի. Կամինսկայան, այն ինքնին հանդես է գալիս որպես ճշմարտություն, որը որպես առավել հավանական ենթադրություն ապացուցում չի պահանջում, և որի կիրառումը կոնկրետ գործով կարող է անընդունելի ճանաչվել (Каминская 21):

Այսպես, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը՝ «Գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը և ապացույցների ներկայացումը» վերառողությամբ, սահմանում է՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարաբերություններում գործում է **գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը** (ընդգծումը մերն է), քանի դեռ չի ապացուցվել գույքի ձեռքբերման օրինականությունը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը կարող է կայացնել վճիռ՝ հիմք ընդունելով գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, եթե գործի քննության արդյունքում հայցվորն ապացուցում է, որ պատասխանողին պատկանող գույքը, այդ թվում՝ մեկ միավոր գույքը, մի քանի միավոր գույքը կամ մեկ միավոր գույքի բաժինը, չի հիմնավորվում օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով: Ինչպես նշեցինք,

կանխավարկածով սահմանված ենթադրությունն իմպերատիվ բնույթի ուժով ինքնըստինքյան պարտադիր է, ուստի չնայած նշված ենթադրության հերքելիությանը՝ օրենսդրի կողմից հայցվորի համար գույքի՝ օրինական եկամտի աղբյուրներով չհիմնավորվելու փաստի ապացուցման պարտականության սահմանումը իմաստագրկում է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, քանի որ կանխավարկածը չի պահանջում ապացուցում: Շարադրվածով պայմանավորված՝ կարծում ենք, որ հիշատակված հոդվածը եզրութաբանական առումով խմբագրման կարիք ունի:

Նպատակային բաղադրիչը իրավական կանխավարկածների կարևոր հատկանիշ է, քանի որ արտացոլում է իրավունքում կանխավարկածների դերը, ընդգծում է, որ օրենսդիրը թույլ է տալիս հենվել նման ենթադրությունների վրա, այլ ոչ թե հավաստի դրույթների՝ տարբեր շահերի պաշտպանության համար, այսինքն՝ իրավական կանխավարկածների առկայությունը պայմանավորված է դրանց բարձր սոցիալական նշանակությամբ: Դրանով պայմանավորված՝ իրավական կանխավարկածը ստանում է իր առանձնահատուկ նշանակությունը՝ ապահովելով իրավաբանական գործունեության ցանկալի արդյունավետությունը: Քննարկվող համատեքստում հիշատակման է արժանի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այն ամրագրումը, ըստ որի՝ դատական ակտը չի կարող պատճառաբանվել ենթադրություններով՝ բացառությամբ այնպիսի ենթադրությունների, որոնք թույլատրելի են օրենքում ամրագրված կանխավարկածներով (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրք, հոդված 9, 3-րդ մաս): Այսինքն՝ իրավական կանխավարկածը օրենսդրությամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նախատեսված այնպիսի ենթադրություն է, որով օրենքով կարգավորվող երևույթը ճանաչվում է որպես առանց հատուկ ապացույցների գոյություն ունեցող : Հենց այս հանգամանքով էլ պայմանավորված են կանխավարկածների՝ որպես իրավական ենթադրությունների առանձնահատուկությունները ճշմարտության որոնման տրամաբանական գործընթացում. դրանք մի կողմից չեն պահանջում ապացուցում, իսկ մյուս կողմից հանդես են գալիս որպես առավել հավանական իրադրություն, ուստի չեն բացառում հերքման հնարավորությունը:

Ինչ վերաբերում է իրավական կանխավարկածների տրամաբանական բնութագրին, ապա տեսաբանների մեծ մասը դրանք բնորոշում է որպես մասնակի ինդուկտիվ մտահանգումներ (Качар 13), այսինքն՝ կանխավարկածի տրամաբանական բնույթը ինդուկտիվ է: Ինդուկցիայի միջոցով միայն կարելի է հանգել հավանական եզրակացությունների, որոնք լրացուցիչ ստուգման կարիք ունեն. ինդուկցիան, չերաշխավորելով դրա միջոցով ձեռք բերված իմացության ճշմարտացիությունը, առաջացնում է փորձի վրա հիմնված ենթադրություն՝ դրանով իսկ հաղորդելով նման իմացությանը հավանականության քիչ թե շատ բարձր աստիճան: Կանխավարկածը փաստերի, իրադարձությունների կայուն, կրկնվող երևույթների փոխկապակցվածության վերաբերյալ դիտարկումների ամփոփման և այդ փոխկապակցվածության որոշակի օրինաչափությունների դուրս բերման հետևանքն է: Այն թույլ է տալիս դատել որոշ փաստերի առկայության մասին՝ հիմնվելով մյուսների վրա և արտահայտել հավանական, այլ ոչ թե հստակ իմացություն: Սա հիմք է տալիս մեզ կանխավարկածները դասել ինդուկտիվ մտահանգումների շարքին: Գոյություն ունի ինդուկցիաների երկու տեսակ՝ ամբողջական և թերի կամ ոչ լրիվ: Ամբողջական ինդուկցիան հնարավոր է միայն այն դեպքում, եթե ուսումնասիրվեն տվյալ դասին պատկանող բոլոր օբյեկտները, և յուրաքանչյուր օբյեկտում հայտնաբերվի պահանջվող հատկանիշը: Իր հերթին կանխավարկածը չի կարող լրիվ ինդուկցիա լինել, քանի որ այն օգտագործվում է այն դեպքում, երբ քննարկվող դասի օբյեկտների թիվը անսահման է, անորոշ կամ անսահմանափակ: Այսպիսով, կանխավարկածը ոչ լրիվ ինդուկտիվ մտահանգում է, ինչը կանխավարկածի այլ հատկանիշի հավանական բնույթի պատճառն է:

Իրավաբանական գրականության մեջ իրավական կանխավարկածների առնչությամբ տեսաբանների մոտեցումները միանշանակ չեն: Լիովին հասկանալի է, որ մասնակի ինդուկտիվ մտահանգումը, ի տարբերություն համապարփակ մտահանգման, ի վիճակի չէ ապահովելու բացարձակ հավաստիություն: Այսպես, կանխավարկածներում պարունակվող դատողությունները մոտավոր ընդհանրացումներ են, որոնք թույլ են տալիս բացառություններ անել, ինչի արդյունքում իրավաբանական գրականության մեջ կասկածներ են առաջացել ընդհանուր առմամբ իրավունքում կանխավարկածի թույլատրելիության վերաբերյալ: Յ. Բ. Լենտալը պնդում էր, որ կանխավարկածները «արդարադատության հենակետ» են, որոնց վրա հիմնվում է օրենսդիրը, երբ ի վիճակի չէ լուծել այս կամ այն հարցը, իսկ Ս. Ա. Մուռոմցևը պնդում էր, որ կանխավարկածը վկայում է իրավական մտքի թերացումների մասին (Левенталь 59): Սակայն, այս քննադատական մոտեցումները չեն կարողացել խաթարել իրավական կանխավարկածների դերը իրավագիտության մեջ, առավել ևս հանգեցնել դրանցից հրաժարվելուն:

Հարկ է նաև նկատել, որ «Կանխավարկած» եզրույթը խորթ չէ նաև դատական պրակտիկայում: Այսպես, ՀՀ Սահմանադրական դատարանը իր՝ 2022 թվականի հուլիսի 12-ի ՍԴԴ-1660 որոշմամբ ամրագրել է՝ «...հաշվի առնելով Սահմանադրությունից բխող ըստ կտակի ժառանգման առաջնահերթությունը՝ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ժառանգության ընդունման պարագայում մնացած այլ պայմանների հավասարության դեպքում պետք է կիրառվի ժառանգությունն ըստ կտակի ընդունման կանխավարկածը»:

Այսպիսով, կանխավարկածը՝ որպես իրավական տեխնիկայի միջոց, ունի հետևյալ հատկանիշները՝ նախորդ փորձով պայմանավորված ենթադրության հավանականություն, նորմատիվություն, իրագործման հատուկ մեխանիզմ (որոշակի փաստերի՝ օրենքով սահմանված հիմքերի ապացուցման դեպքում ենթադրվող փաստերն (презюмируемые факты) իրավակիրառողն ընդունում է առանց հատուկ ապացույցների), հերքման հնարավորություն (եթե ենթադրվող փաստերը հերքվում են, կանխավարկածը չի կիրառվում), նպատակային բաղադրիչ, որը դրսևորվում է տարբեր շահերի պաշտպանությամբ (անհատի, հասարակության, պետության): Ուստի իրավական կանխավարկածը իրավական տեխնիկայի միջոց է, որով իրավական ակտում ամրագրվում է հնարավոր ենթադրություն, որը համարվում է ճշմարիտ, եթե ապացուցված են օրենքով սահմանված համապատասխան փաստերը, և դեռ ապացուցված չեն այն հերքող փաստերը:

### Իրավական ֆիկցիաների եռությունը

Իրավական ենթադրության մեկ այլ տեսակ է դեռևս հռոմեական իրավունքից հայտնի ֆիկցիան: Ի հերիհզը ֆիկցիաները անվանում էր «իրավունքի սպիտակ ստեր» (Mashruwala 76): Ֆիկցիաները սկսել են կիրառվել հռոմեական պրետորների կողմից: «Fictio»-ն իհն հռոմեական օրենքում կեղծ ենթադրություն էր, որը հաստատվել էր պրետորի կողմից և իմպերատիվ նշանակություն ուներ կողմերի համար: Անգլիական իրավունքը ևս հարուստ է իրավական ֆիկցիաներով: Բրիտանացի ականավոր իրավաբան Հենրի Մեյնն իր դասական աշխատության մեջ նշել է, որ կան երեք հիմնական ինստիտուտներ, որոնց միջոցով երաշխավորվում է հասարակության և իրավունքի ներդաշնակությունը. դրանք են՝ իրավական ֆիկցիաները, արդարությունը և օրենքները (Maine 4):

Իրավական ֆիկցիան ևս հայ իրավական մտքում խոր արմատներ և լայն կիրառություն է ունեցել: Մխիթար Գոշի կողմից այն կիրառվել է Դատաստանագրքի մի շարք իրավական նորմերի մոդելավորման համար:

Այսպես, Դատաստանագրքի «Նախադրությունն դատաստանի գրվածքների» բաժնի «Այն մասին, թե որպե՞ս է արժան, որ դատավորները լինեն ամբաստանյալների

և դատախազների համար» վերտառությամբ «2» գլխում ասվում է. « (...) Դատավորները նաև խրատվեն այս բանում, որպեսզի նախ Տիրոջից աղոթքներով օգնություն հայցեն, ապա նոր միայն մտնեն դատաստանի ատյան: Եվ երբ իրավացի դատաստանը ի բարին ավարտվի, այն Աստծունը համարվի, քանզի նա տվեց բերան և իմաստություն (...):» Զիշյալ նորմի վերլուծությունից հետևում է, որ դատավորներն իրավացի դատաստան կայացրել են Աստծո անունից: Այսպիսի կարգավորումը, նորմի գործողության ժամանակաշրջանի Էությանը համապատասխանելով հանդերձ, իրավական ֆիլոսոֆիայի դրսևորում է, քանզի այն իրավական տեսանկյունից իրականության դեֆորմացիայի դրսևորում է:

Դատաստանագրքի «Թագավորների դատաստանների մասին և թե ի՞նչ բաներ են նրանց ձեռքով լինում» վերտառությամբ «Բ» գլխում ամրագրված է հետևյալ կարգավորումը. «(...) Իսկ եթե մեռնեն թագավորներն ու նրանց որդիները, և թագավորի որդին ուրիշ որդիներ ունենա, և դուստրն էլ որդիներ ունենա, ապա որդու որդիները այթռը ժառանգեն, և ոչ թե դստեր որդիները, և որքան ծննդյամբ որդիներ ունենա կամ որդու որդիներ, դստեր զավակներից արքա չվերցնեն, իսկ եթե վերցնեն՝ վերցրածները օտար թող համարվեն, և ոչ իսկական ժառանգորդ (...): Իսկ եթե թագավորը որդի չունենա, այլ դուստր, թագն իր դստերը թողնի ժառանգություն: Եվ օրենքներից հաստատուն վկայություններ ունենք, որ երբ մեռնողը որդի չի ունենում, իր դստերն է թողնում ժառանգությունը: Բայց դստեր մահից հետո, նրա ծնունդները օտար են համարվում և ժառանգություն չեն ստանում (...):» Շարադրվածից հետևում է, որ, ըստ Էության, արքայի հետ մոտ արյունակցական կապերի մեջ գտնվող անձինք համարվել են օտար և մեկուսացվել ժառանգությունից՝ գահից: Նպատակային հատուկ բաղադրիչ ունենալով հանդերձ (պետության պաշտպանությունը)՝ այն ակնհայտ կեղծ դրույթ է:

Դատաստանագրքի «Այն գողերի մասին, ովքեր տուն են կտրում» վերտառությամբ «ՅԴ» գլխում տեղ է գտել հետևյալ կարգավորումը. «Իսկ եթե գիշերով գողը բռնվի ու մեռցվի, այդ սպանություն չի լինի: Սակայն եթե արևը ծագի և այդժամ մեռցվի, ապա սպանողը մահապարտ է, և սպանելու փոխարեն (համար) մեռցվի: Որովհետև խավար գիշերվա անգիտության մեջ, ըստ օրենքի, մեղք չի համարվում (գողին սպանելը), սակայն, երբ լույսը ծագի, այդժամ իբրև կամավոր սպանողը պիտի իրավամբ դատվի (...):» Զիշատակված նորմից հետևում է, որ գիշերով ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը սպանություն չի համարվել, ինչը իրավական ֆիլոսոֆիայի դրսևորում է:

Դատաստանագրքի «Կամա և ակամա սպանությունների մասին» վերտառությամբ «ՄԼԳ» գլխում ամրագրված է հետևյալ կարգավորումը. «(...) Եթե մեկը քարով կամ փայտով մեկին առավել է չարչարում, քան վերջինս կարող է տանել, նման դեպքերում համարվում է, թե սրով սպանեց (...):» Այս նորմը ևս կեղծ դրույթի օրինակ է, քանի որ քարով կամ փայտով դաժանորեն կատարված սպանությունը հավասարեցվում է սրով կատարված սպանության՝ դրանից բխող բոլոր հետևանքներով, այդ թվում՝ առավել խիստ պատժով:

Դատաստանագրքում կարելի է հանդիպել իրավական ֆիլոսոֆիայի կիրառման այլ դեպքերի ևս:

Սակայն, տեսաբանները հիմնականում իրավական ֆիլոսոֆիային բացասաբար էին վերաբերում՝ այն համարելով իրավագիտության համար անհարկի և վնասակար երևույթ և պնդում, որ ֆիլոսոֆիան տեղ չունի իրավունքի ճշգրիտ գիտության մեջ: Այսպես, իրավական ֆիլոսոֆիաների հայեցակարգը քննադատության ենթարկվեց այնպիսի գիտնականների կողմից, ինչպիսիք են Բլեքսթոունը և Ջերեմի Բենթեմը: Բլեքսթոունը բնորոշում էր ֆիլոսոֆիան որպես «շատ շահավետ և օգտակար միջոց», սակայն դրա օգտակարությունը գնահատելով հանդերձ՝ Բլեքսթոունը չէր որոշում իրավական ֆիլոսոֆիայի կիրառումը ճշգրիտ արդյունքի հասնելու համար՝ նշելով՝ «(...)Չնայած մենք ընդունում ենք արդյունքը, մենք չենք կարող որոշունել այդ

*արդյունքին հասնելու նպատակով կիրառվող միջոցները»*: Մյուս քննադատը՝ Ջերեմի Բենթենը, խստորեն դատապարտում էր ֆիլցիաների կիրառումը հատկապես այն դեպքերում, երբ «(...) դատավորները կիրառում են ֆիլցիան օրենքը լրացնելու համար՝ օգտագործելով դրանք որպես իրավական մեկնաբանության օժանդակություն»։ Բենթենը նույնիսկ համեմատում էր ֆիլցիան օրենքի երակներում շրջանառվող սիֆիլիսի հետ (Harmon 4):

Իրավունքի զարգացման գործում ֆիլցիան, իրապես, առանցքային դերակատարում է ունեցել, այն կայունություն է հաղորդում իրավական կարգավորմանը, սահմանափակում է կամայական, անհիմն որոշումների հնարավորությունը: Ֆիլցիաները իրավակիրառի համար ծառայում են որպես հենարան և իրավական հիմնավորումների օժանդակություն: Ինչպես նշել է Չայցլը, իրավական ֆիլցիան փրկօղակ է, որը օրենսդիրը տալիս է կոնկրետ իրավական խնդիրներ լուծող սուբյեկտին (Зайцев 35): Ըստ Գ. Ֆ. Դորմիդոնտովի՝ իրավական ֆիլցիան ծագում է բանականության հրատապ կարիքներից, բայց ստեղծվում է երևակայության օգնությամբ (Дормидонтов 204): Որպես ֆիլցիայի վառ օրինակ՝ նշենք իրավաբանական անձի ինստիտուտը, որը ծագել է հռոմեական իրավունքից և պահպանում է արդիականությունը. կազմակերպությունների հայեցակարգի հիմքում դրվել է ֆիզիկական անձանց իրավաբանական բնույթը:

Իրավաբանական ֆիլցիան նորմատիվ ընդհանրացում է, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ամրագրվում է նորմատիվ իրավական ակտի տեքստում: Այն ունի ունիվերսալ բնույթ, այսինքն՝ կիրառվում է իրավունքի բոլոր ճյուղերում: Ֆիլցիան ունի այնպիսի հիմնական հատկանիշներ, ինչպիսիք են *կեղծ (ոչ իրական) բնույթը, անհերքելիությունը, իրականության միտումնավոր վերափոխումը, իրացման հատուկ մեխանիզմը, կիրառման հատուկ նպատակը (անձանց, հասարակության և պետության շահերի պաշտպանությունը)*: Օրենսդիրը փորձում է պաշտպանել իրավակիրառին փակուղային իրավիճակներից՝ հնարավորություն տալով նրան, ելնելով ստեղծված հանգամանքներից՝ առավել համապարփակ և արդյունավետ կարգավորել հասարակական հարաբերությունները: Հասարակությունը դիմամիկ է, իսկ օրենքները՝ ստատիկ: Իրավական ֆիլցիաները, ըստ Էուբյան, փոխարինում են իրավական փաստերին այն դեպքերում, երբ իրավահարաբերությունների դիմամիկան պահանջում է իրավահարաբերությունը տրամաբանական ավարտին հասցնել՝ իրականության մեջ բացակայող փաստերը փոխարինելով մտացածին դրույթներով՝ հավասարեցնելով դրանք իրավական նշանակություն ունեցող փաստերին:

Ոչ իրական (կեղծ) բնույթը իրավական ֆիլցիայի հիմնական հատկանիշներից է, որն ընդգծում է դրա յուրահատկությունը և թույլ տալիս տարբերակել այն իրավական տեխնիկայի այլ միջոցներից. ֆիլցիան իրականության վերափոխման միջոցներից մեկն է:

Գրականության մեջ ֆիլցիայի առանձնահատկություններից ընդգծվում է նաև դրա անհերքելի բնույթը. իրավական ֆիլցիան օժտված է իմպերատիվ (անվիճելի) բնույթով, այսինքն՝ չի նախատեսում հերքման հնարավորություն, իսկ հերքվող դրույթները ֆիլցիա չեն: Ինչպես նշում է Օ. Վ. Տանիմովը, ֆիլցիաների անհերքելիությունը դրանց ամենաեական առանձնահատկությունն է իրավական կանխավարկածներից (Танимов 53): Այսպես, տեսաբանների մեծ մասը իրավական ֆիլցիա է համարում քաղաքացուն դատական կարգով մահացած ճանաչելը, եթե նրա մշտական բնակության վայրում օրենքով սահմանված ժամկետում նրա գտնվելու վայրի մասին տեղեկություն չկա (Черданцев 312): Սակայն մահացած ճանաչված քաղաքացու հայտնվելու կամ նրա գտնվելու վայրը հայտնաբերվելու դեպքում դատարանը վերացնում է նրան մահացած ճանաչելու մասին վճիռը: Այս հարցում տարընթերցումներն առաջանում են ֆիլցիայի առանձնահատկությունների թերի ընկալման հետևանքով: Զաղաքացուն մահացած ճանաչելու իրավական կառուցակարգն ինքնին իրավական կանխավարկած է, քանի որ հիմնված է հերքելի,



հավանական ենթադրության վրա: Սակայն քննարկվող կառուցակարգում ֆիկցիա է, օրինակ, հետևյալ դրույթը՝ բացակայողի վերաբերյալ վերջին տեղեկությունների ստացման օրը որոշելու անհնարինության դեպքում անհայտ բացակայող ճանաչելու համար ժամկետի հաշվարկի սկիզբ է համարվում այն ամսին հաջորդող ամսվա մեկը, երբ ստացված են եղել բացակայողի վերաբերյալ վերջին տեղեկությունները, իսկ եթե հնարավոր չէ որոշել այդ ամիսը, ապա՝ հաջորդ տարվա հունվարի մեկը: Այսպիսով, ֆիկցիան միշտ անհերքելի է, իսկ հերքելի դրույթները ֆիկցիա չեն:

Ինչ վերաբերում է իրավական ֆիկցիաների տրամաբանական բնութագրին, ապա դրանք ունեն դեդուկտիվ բնույթ: Գ. Վայինգերը ևս պնդում էր, որ ֆիկցիան հիմնված է դեդուկցիայի վրա, քանի որ ցանկացած նորմատիվ ակտ առանձին դեպքերի, իրադարձությունների ընդհանրացման արդյունք է (Vaihinger 157): Ընդ որում, ֆիկցիայի հավանականության աստիճանը կարող է տարբեր լինել՝ բավականին բարձրից մինչև ծայրահեղ աննշան: Նման ենթադրությունը միշտ ունի համապատասխան սոցիալական հարաբերությունների առանձնահատկություններից բխող որոշակի ռացիոնալ հիմնավորում: Իրավական ֆիկցիան երբեք կամայականորեն չի ձևավորվում, դրանով սահմանված ենթադրությունը միշտ ունի տրամաբանական բացատրություն՝ նպատակահարմարության, արդարության և այլնի տեսանկյունից:

Իրավական համակարգում առանցքային նշանակություն ունեն սահմանադրաիրավական ֆիկցիաները: Դա պայմանավորված է ոչ միայն դրանց համեմատաբար թերի ուսումնասիրությամբ, այլև գործնական նշանակությամբ: Սահմանադրության հիմնարար դիրքը իրավական համակարգում և բարձրագույն իրավաբանական ուժը, Հիմնական օրենքի որոշակի դրույթների ավանդական պայմանականությունն ու անիրականությունը, սահմանադրական իրավունքի էական կախվածությունը պաշտոնական գաղափարախոսությունից և քաղաքական իրադրությունից և մի շարք այլ հանգամանքներից ստեղծում են բարենպաստ հիմք սահմանադրաիրավական ֆիկցիաների ձևավորման համար և օբյեկտիվորեն արդիականացնում են այս խնդիրների ուսումնասիրությունը: Ընդ որում՝ քննարկվող իրավունքի ճյուղին հայտնի են ինչպես դրական, այնպես էլ բացասական ֆիկցիաներ (դրանք ժխտում են իրականում գոյություն ունեցող հանգամանքները): Նման իրավական ֆիկցիայի օրինակ կարող է լինել օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը:

Ֆիկցիայի օրինակ է նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված դրույթը, համաձայն որի՝ «Եթե Սահմանադրական դատարանը քննարկվող հարցի վերաբերյալ ձայների հավասարության հետևանքով, ըստ էության, որոշում կամ եզրակացություն չի ընդունում, ապա դիմումը համարվում է մերժված, որի մասին հայտարարվում է նիստերի դահլիճում»:

Հիշատակված նորմի հիպոթեզը սահմանում է երկու պայման՝ քվեարկության արդյունքը և վերջնական որոշում կայացնելու դժվարությունը, իսկ դիսպոզիցիայով ամրագրված իրավական ֆիկցիան նախատեսում է ելք ստեղծված իրավիճակից, քանի որ դատավորների ձայների հավասարությունը թույլ չի տալիս հաղթահարել նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության կանխավարկածը:

Աշխատանքային օրենսդրությունը ևս գերծ չէ իրավական ֆիկցիաներից: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո պայմանագիրը չի լուծվում սույն հոդվածով սահմանված կարգով, և աշխատանքային հարաբերությունները շարունակվում են, ապա պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով (ՀՀ աշխատանքային օրենսգրքը, հոդված 111, 5-րդ մաս):

Միանշանակ չեն տեսաբանների կարծիքները քրեական իրավունքում ֆիկցիաների կիրառելիության վերաբերյալ: Իրավունքի տեսաբանների որոշ մասի կարծիքով՝ քրեական իրավունքում ֆիկցիաներ չկան: Մենք չենք կիսում այս տեսակետը, ուստի հարկ ենք համարում առանձին անդրադարձ կատարել քրեական իրավունքում այս երևույթի դրսևորումներին: Իրավական ֆիկցիան՝ որպես իրավական տեխնիկայի միջոց, օրենսդրի կողմից կիրառվել է որոշ նորմերի ձևավորման ժամանակ: Այսպես, Օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենսգրքով նախատեսված հանցանքը կատարելու ժամանակ է համարվում գործողությունը կամ անգործությունը կատարելու պահը՝ անկախ հետևանքներն առաջանալու պահից: Այսինքն, նյութական հանցակազմի միջոցով նկարագրված հանցակազմերի պարագայում հանցանքն ավարտված է համարվում անկախ հետևանքների վրա հասնելու պահից, ինչը և վկայում է ֆիկցիայի կիրառման մասին:

Իրավական ֆիկցիան կիրառվել է նաև հանցակցության ինստիտուտի իրավակարգավորումների շրջանակներում: Այսպես, հանցանքի միջնորդավորված կատարման դեպքում կատարող է համարվում այնպիսի անձ, որը անմիջականորեն չի կատարել հանցագործության օբյեկտիվ կողմը: Ասվածը վերաբերում է նաև միջնորդավորված դրոշխությանը, կազմակերպմանը և օժանդակությանը:

Իրավական ֆիկցիայի դրսևորում է նաև Օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված կարգավորումը, ըստ որի՝ (...) հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված նաև այն դեպքում, երբ դա ստեղծած կամ ղեկավարող անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն անմիջականորեն կատարել է խմբի թեկուզ մեկ անդամը կամ խմբի առաջադրանքով՝ դրա անդամ չհանդիսացող անձը:

Իրավական ֆիկցիայի տարրեր առկա են նաև Օրենսգրքի՝ «Քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքներ» վերտառությամբ գլխում, որտեղ, ըստ Էության, հանրային բարձր վտանգավորություն ունեցող արարքները, իրավաչափության որոշակի պայմանների բավարարելու պարագայում, չեն առաջացնում քրեական պատասխանատվություն:

Իրավական ֆիկցիայի տարրեր առկա են պատժի նշանակման կանոններում: Այսպես, համաձայնեցման կամ համագործակցության վարույթի դեպքում պատժի նշանակելիս հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատժի նշանակման կանոնները չեն գործում (ՀՀ քրեական օրենսգրք, հոդված 77, 5-րդ մաս): Տվյալ դեպքում իրավական ֆիկցիայի առկայությունը պայմանավորված է իրականության դեֆորմացիայով, երբ մի հանգամանքի իրական առկայությունը, այս դեպքում՝ ռեցիդիվի, համաձայնեցման կամ համագործակցության վարույթի դեպքում պատժի նշանակելիս հաշվի չի առնվում և համարվում է գոյություն չունեցող:

Իրավական ֆիկցիայի դրսևորում է նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու ժամկետը հաշվակցելու վերաբերյալ քրեաիրավական նորմը, համաձայն որի՝ հանցանքի կատարման համար դեռևս չդատապարտված կամ պատժի ժամկետը լրիվ կամ մասնակիորեն չկրած և հոգեբուժական կազմակերպությունում հարկադիր բուժման ուղարկված անձի ապաքինման դեպքում նրա նկատմամբ պատժի նշանակելիս կամ պատժը կրելը վերականգնելիս հոգեբուժական կազմակերպությունում հարկադիր բուժման ժամկետը հաշվակցվում է պատժի ժամկետին՝ հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու 1 օրը հաշվելով ազատագրվման 1 օրվա դիմաց (ՀՀ քրեական օրենսգրք, հոդված 118): Մեքբերված կարգավորումը, ըստ Էության, ֆիկցիա է, քանի որ անձը հարկադիր բուժում է անցնում և պատժ է կրում միաժամանակ:

Իրավական ֆիկցիա է կիրառվում նաև ձևական հանցակազմերի տեսակ համարվող հատված հանցակազմերի նկարագրման դեպքում, երբ հանցանքի ավարտի պահը տեղափոխվում է ավելի վաղ ժամանակահատված:

Իրավական ֆիլցիա կարող է կիրառվել տևող հանցագործության դեպքում արարքի որակման ժամանակ: Տևող հանցագործության որակման ժամանակ որոշ դժվարություններ են առաջանում այն դեպքերում, երբ հանցագործության իրավաբանական ավարտից հետո անձը շարունակում է տևող հանցագործություն համարվող արարքի օբյեկտիվ կողմի կատարումը: Օրինակ, երբ ֆինանսական բուրգ ղեկավարելու համար ազատագրված դատապարտված անձը պատժի կրման ընթացքում շարունակում է ղեկավարել այն, կամ հանցավոր կազմակերպությանը մասնակցելու համար ազատագրված դատապարտվածը պատժի կրման ընթացքում շարունակում է մասնակցել այդ կազմակերպությանը, կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ պահպանելու համար ազատագրված դատապարտվածը պատժի կրման ընթացքում շարունակում է պահպանել քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակը: Մեր կարծիքով՝ դիտարկվող իրավիճակներում պետք է ղեկավարվել այն կանոնով, ըստ որի՝ տևող հանցագործության համար ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռը՝ որպես իրավաբանական ֆիլցիա, ավարտում է այդ հանցագործության ընթացքը, իսկ դրանից հետո անձի՝ այդ հանցանքը շարունակելուն ուղղված փաստացի արարքները պետք է դիտարկվեն որպես ինքնուրույն հանցագործություն:

Քննարկվող համատեքստում հիշատակման են արժանի նաև այն դեպքերը, երբ անձի փաստացի կատարած արարքը պարունակում է մեկ այլ ավարտված հանցագործության հատկանիշներ, սակայն կատարվածը որակվում է չավարտված հանցագործության կանոններով: Որակման այս կանոնի հիմքում ևս ընկած է իրավաբանական ֆիլցիան, որի ուժով մի հանցագործությունը, որը փաստացի հասցվել է ավարտին, գնահատվում է որպես չավարտված (Малинин 744): Ասվածը գործնականում պատկերացնելու համար ներկայացնենք հետևյալ իրավիճակները: Անձը միասնական դիտավորությամբ ցանկանում է սպանել երկու անձի, սակայն իրենից անկախ հանգամանքներով իր դիտավորությունն իրականացնում է միայն մեկի մասով: Տվյալ դեպքում անձի արարքը ենթակա է որակման որպես երկու կամ ավելի անձանց սպանության փորձ (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 44, 155)՝ չնայած այն հանգամանքին, որ մեկի նկատմամբ սպանությունը, ըստ էության, ավարտված է: Անձը ցանկանում է հափշտակել թմրամիջոցներ, սակայն սխալմամբ հափշտակում է այդպիսիք չհանդիսացող դեղահաբեր: Նկարագրված դեպքում անձի արարքը ենթակա է որակման որպես թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պատրաստուկներ կամ դրանց համարժեք նյութեր (անալոգ) կամ դրանց ածանցյալներ կամ պրեկուրսորներ հափշտակելու փորձ (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 44, 397)՝ չնայած այն հանգամանքին, որ անձը փաստացի ոտնձգել է քրեաիրավական պաշտպանության ներքո գտնվող մեկ այլ օբյեկտի դեմ:

Իրավական ֆիլցիան ևս խորթ չէ դատական պրակտիկայում: Այսպես, ՀՀ Վճռաբեկ դատարանը, 25. 04. 2017 թվականի ՎԴ/0528/05/16 որոշմամբ անդրադառնալով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածին, որը նախատեսում է վարչական մարմնի կողմից չընդունված վարչական ակտի՝ օրենքի ուժով ընդունված համարվելու իրավական հնարավորությունը, նշել է, որ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում վարչական ակտի ընդունման օրենքով սահմանված ժամկետը խախտվելու և օրենքով նախատեսված որոշակի պայմանների առկայության դեպքում գործում է այն ֆիլցիան, ըստ որի՝ պահանջվող բարենպաստ վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է օգտվել դիմում ներկայացնելիս իր ակնկալած իրավունքից, որը տրամադրման էր ենթակա ընդունվելիք վարչական ակտով:

Այսպիսով, իրավական ֆիլցիան՝ որպես իրավական տեխնիկայի միջոց, ունի հետևյալ հատկանիշները՝ նորմատիվություն, կեղծ լինելը, անհերքելիությունը, իրացման հատուկ մեխանիզմը, նպատակային բաղադրիչ, որը դրսևորվում է տարբեր

շահերի պաշտպանությամբ (անհատի, հասարակության, պետության): Իրավական ֆիկցիան իրավական տեխնիկայի միջոց է, որի օգնությամբ իրավական ակտերում ամրագրվում է կեղծ անհերքելի դրույթ, որը կիրառելի է օրենքով սահմանված պայմանների առկայության դեպքում և որոշակի կերպով դեֆորմացնում (շտկում) է իրականությունը տարբեր շահերի (անհատի, հասարակության, պետության) պաշտպանության նպատակով: Այլ կերպ՝ իրավական ֆիկցիան իրավունքի Նորմերի մշակման ու իրացման իրավաբանական տեխնիկայի ունիվերսալ մեթոդ է, որն ունի հատուկ նպատակային նշանակություն հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման կառուցակարգում և իրավական կարգավորման մեջ անորոշության հաղթահարման միջոցներից մեկն է:

### **Իրավական կանխավարկածների և ֆիկցիաների հարաբերակցությունը**

Կանխավարկածների և ֆիկցիաների առանձնահատկությունների ու հարաբերակցության անբավարար ուսումնասիրությունը դժվարություններ է առաջացնում իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայում, քանի որ դրանք անառարկելիորեն դրական դեր են խաղում իրավական կարգավորման մեխանիզմում: Այս երկու կատեգորիաների տարբերակման դժվարությունը պայմանավորված է նրանով, որ դրանք բավական նման են և սերտորեն կապված, ընդ որում՝ որպես իրավական տեխնիկայի միջոցներ ունեն ընդհանուր ծագում՝ հին հռոմեական իրավունքը: Ինչպես ֆիկցիան, այնպես էլ կանխավարկածն արդյունավետ միջոց են օբյեկտիվ իրականության մեջ անորոշությունը հաղթահարելու համար: Այս երևույթների սերտ կապը նկատելի են 19-րդ դարի տեսաբանները: Գերմանացի իրավաբաններ Բերգերը, Կունցենը, Լյուդենը, տարբեր մոտեցումներ ունենալով ֆիկցիայի և կանխավարկածի հասկացությունների վերջնական սահմանման հարցում, այդ երևույթները սերտ կապի մեջ էին դիտարկում, իսկ Դ. Ի. Մեյերը այս երկու հասկացությունները բնորոշել է որպես սովորական կարգից շեղումներ (Мейер 31):

Իրավական կանխավարկածը և իրավական ֆիկցիան քերականական նախադասության տեսքով ձևավորված դատողություններ են: Գոյաբանության տեսանկյունից՝ ֆիկցիան որոշակի կերպով վերաձևակերպում է կեցությունը՝ այն արտահայտելով անգոյության միջոցով: Կանխավարկածը կարող է վերաբերել ինչպես կեցությանը, այնպես էլ անգոյությանը (համապատասխանել կամ չհամապատասխանել իրականությանը, քանի որ հավանական ենթադրություն է): Որպես գնուսելոգիական հնարքներ՝ կանխավարկածը և ֆիկցիան պարունակում են մետաֆորայի (փոխաբերության) տարրեր, քանզի արտահայտում են անհայտ փաստերը հայտնիի միջոցով՝ լրացնելով անբավարար (չհերիքող) ինֆորմացիան: Սակայն ֆիկցիան ունի մետաֆորայի առավել բարձր աստիճան, քան կանխավարկածը, քանի որ ռեժիմը տարածում է մեկ օբյեկտից մյուսի վրա և հարթեցնում է միմյանց հակասող հասկացությունները: Իրավական ֆիկցիան, ինչպես իրավական կանխավարկածը, ընդգրկում է տրամաբանական-փիլիսոփայական, իրավաբանական և սոցիալ-քաղաքական ասպեկտներ, որոնք դրսևորվում են համապատասխանաբար կանխավարկածի և ֆիկցիայի գոյության փուլերում՝ առաջացում-գործողություն-արդյունք (Зачетина 13):

Տրամաբանական-փիլիսոփայական ասպեկտը դրսևորվում է նրանում, որ դրանք ձևավորվում են հասարակական կյանքի օրինաչափությունների հաշվառմամբ, ընդ որում՝ կանխավարկածը պարունակում է նախորդ փորձին համապատասխան դրույթ, իսկ իրավական ֆիկցիան այդ փորձին հակասող դրույթ է, այսինքն, ֆիկցիան արհեստական երևույթ չէ, այն Նույնպես հիմնված է իրականության փաստերի վրա, միայն «շրջում» է դրանք: Իրավական կանխավարկածը և իրավական ֆիկցիան, որպես իրավական տեխնիկայի միջոցներ, իրավական Նորմերի բաղկացուցիչ մասն

են, ուստի իրականացվում են դրանց միջոցով: Իրավական կանխավարկածի ուսումնասիրության ժամանակ հայտնաբերված նշանների նկատմամբ էքստրապոլյացիայի մեթոդի կիրառումը իրավական ֆիլոսոֆիայի համար նաև ցույց է տվել, որ կանխավարկած պարունակող նորմերը և ֆիլոսոֆիաներ պարունակող նորմերը ունեն իրականացման համանման մեխանիզմ: Ինչպես կանխավարկածն ունի փաստեր, հիմքեր, որոնք անհրաժեշտ են իր նորմը պարունակող գործողություններ սկսելու համար, այնպես էլ ֆիլոսոֆիա պարունակող նորմի իրականացումը կախված է օրենքում (իրավական ակտում) նշված որոշակի փաստերի առկայությունից: Նման նորմերում ամրագրված չապացուցված տեղեկությունը իրավական տեխնիկայի միջոցներով ապացուցված ճանաչելու արդյունքը տարբեր շահերի պաշտպանությունն է (սոցիալական-քաղաքական ասպեկտ) (Зачекина 13):

Իրավական ֆիլոսոֆիաների և կանխավարկածների գոյության իմաստը ենթադրության օգնությամբ այնպիսի իրավական հետևանք առաջացնելն է, որը սովորաբար առաջանում է իրադարձության կամ գործողության արդյունքում. դրանք փոխարինում են իրավական փաստերին՝ հաղթահարելով անորոշությունը: Այստեղից ակնհայտ է դառնում ֆիլոսոֆիաների և կանխավարկածների անքակտելի կապը իրական աշխարհի հետ, այն աշխարհի, որտեղ իրավական հետևանքները շոշափելի են և անհրաժեշտ: Լինելով մարդկային երևակայության արդյունք՝ ֆիլոսոֆիան ու կանխավարկածը դուրս են իրականությունից, այսինքն՝ դրանք իրական աշխարհում գոյություն չունեն, բայց, միևնույն ժամանակ, իրավական իրականության անբաժան մասն են կազմում: Այլ կերպ ասած, ֆիլոսոֆիաներն ու կանխավարկածները սահմանում են ինչ-որ բան, որը կա օրենքում, թեև իրականում կարող է գոյություն չունենալ: Վերոնշյալ հանգամանքով պայմանավորված՝ իրավական կանխավարկածի և ֆիլոսոֆիայի համեմատության արդյունքում կարելի է վեր հանել մի շարք նմանություններ, մասնավորապես, դրանք ամրագրում են օրենքի յուրահատուկ, ոչ ստանդարտ դրույթներ: Դրանց կիրառումը, որպես կանոն, հանգեցնում է օբյեկտիվ և իրավական իրականության անհամապատասխանության, քանի որ իրավական այս երևույթների առնչությամբ «ճշմարտություն» հասկացությունը ձեռք է բերում հարաբերական ու պայմանական բնույթ: Բացի դրանից, կանխավարկածն ու ֆիլոսոֆիան նմանատիպ գործառույթներ են կատարում իրավական կարգավորման գործընթացում: Դրանց գոյությունը պայմանավորված է օրենսդրության բացերը հաղթահարելու, հասարակական հարաբերություններում անորոշությունը վերացնելու անհրաժեշտությամբ: Միևնույն ժամանակ, դրանց փոխհարաբերության վերլուծությունը ցույց է տվել, որ չնայած առկա նմանություններին՝ այս նորմատիվ ընդհանրացումները տարբեր են:

Անդրադառնալով իրավական կանխավարկածի և ֆիլոսոֆիայի տարբերակմանը՝ Ֆուլլերը նշել է, որ հիմնական տարբերակիչ հատկանիշը երկու իրավական կատեգորիաների միջև հետևյալն է. «(...) *ֆիլոսոֆիան ենթադրում է ակնհայտ կեղծ դրույթ, իսկ կանխավարկածը ենթադրում է մի բան, որը կարող է ճշմարիտ լինել*» (Fuller 368):

## Եզրակացություն

Այսպիսով, իրավական կանխավարկածի և ֆիլոսոֆիայի հարաբերակցության վերլուծությունը վկայում է, որ չնայած առկա նմանությանը՝ այս նորմատիվ ընդհանրացումները իրենց բնույթով տարբեր են: Կանխավարկածը հերքելի է, իսկ ամրագրվող ենթադրությունը հավանական բնույթ ունի, մինչդեռ ֆիլոսոֆիան անհերքելի է, իսկ ֆիլոսոֆիայով սահմանված դրույթը՝ կեղծ: Բացի դրանից, կանխավարկածն ունի ինդուկտիվ բնույթ՝ թերի ինդուկցիայի ձևով, իսկ ֆիլոսոֆիան՝ դեդուկտիվ: Ֆիլոսոֆիայի կիրառման նպատակը գիտակցաբար իրականությունը չհամապատասխանող դատողությունը ճշմարիտ ճանաչելն է: Իրավագիտության մեջ այն չի հետապնդում

ճշմարտության հաստատման նպատակ. դրա հիմնական նպատակը այն հարաբերությունների կարգավորումն է, որոնք այլ կերպ չեն ենթարկվում կարգավորման: Կանխավարկածները հաստատում են անհրաժեշտ իրավական փաստը՝ ելնելով դրա գոյության հավանականությունից: Կանխավարկածների և ֆիկցիաների հիմնական նմանությունն այն է, որ երկուսն էլ պայմանականորեն ընդունվում են որպես ճշմարիտ՝ ծառայելով օբյեկտիվ իրականության մեջ անորոշության հաղթահարմանը:

Իրականացված հետազոտության արդյունքներով՝ կարծում ենք, որ այս երկու երևույթների միջև տարբերակումը պետք է կատարվի հետևյալ հիմքերով՝ ըստ ձևավորման կարգի, հավանականության աստիճանի, հերքման հնարավորության, կիրառման ոլորտի:

**Ձևավորման կարգը.** կանխավարկածը ունի ինդուկտիվ բնույթ, այսինքն՝ լինելով ինդուկտիվ մտահանգում՝ այն հիմնված է փաստական հիմքի վրա: Կանխավարկածը երևույթների, փաստերի, իրադարձությունների կայուն, կրկնվող հարաբերությունների դիտարկման, այդ դիտարկումների ընդհանրացման և արդյունքում որոշակի օրինաչափությունների վերհանման արդյունք է: Իրավական ֆիկցիան, իր հերթին, ունի դեդուկտիվ բնույթ՝ չունենալով փաստական հիմք:

**Հավանականության աստիճանը.** կանխավարկածը իրավական ենթադրություն է, որը հավանաբար ճշմարիտ է, և նման ենթադրության ճշմարտացիության հավանականությունը կարող է լինել և՛ փոքր, և՛ բավական նշանակալի: Ֆիկցիան ի սկզբանե կեղծ, անհավանական ենթադրություն է: Այլ կերպ ասած, ըստ ճշմարտության չափանիշի՝ կանխավարկածի հիմքը ենթադրյալ երևույթի հավանականության այս կամ այն աստիճանն է, իսկ ֆիկցիայի հիմքը՝ երևակայությունը:

**Հերքման հնարավորությունը.** կանխավարկածը, ամենայն հավանականությամբ, ինդուկտիվ բնույթի հետևանքով ենթակա է հերքման, իսկ ֆիկցիան վիճարկել հնարավոր չէ, քանի որ այն ի սկզբանե պարունակում է կեղծ իմպերատիվ դրույթ և ստուգման ենթակա չէ: Եթե կանխավարկածը ներառում է իրավական ենթադրություն, այսինքն՝ պարտավորություն ենթադրելու, որ որոշակի փաստեր առկա են, քանի դեռ հակառակն ապացուցված չէ, ապա ֆիկցիան ենթադրում է իրավական պնդում, այսինքն՝ փաստերը հաստատված ճանաչելու բացառիկ պարտականություն:

**Կիրառման ոլորտը.** կանխավարկածների ճնշող մեծամասնությունը կենտրոնացած է իրավունքի դատավարական նորմերում, իսկ ֆիկցիաները ամենից հաճախ ամրագրվում են նյութական նորմերում, բացի դրանից, ի տարբերություն կանխավարկածների՝ ֆիկցիաները հազվադեպ են անուղղակի արտահայտություն ստանում նորմատիվ իրավական ակտի տեքստում:

Սույն աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքների հիման վրա՝ առաջարկում ենք Նորմատիվ իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքը լրացնել նոր հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ՝

**«Հոդված 15.1 Նորմատիվ իրավական ակտում իրավական կանխավարկածների և ֆիկցիաների կիրառումը**

1. Նորմատիվ իրավական ակտում կարող են կիրառվել իրավական կանխավարկածներ և ֆիկցիաներ:

2. Իրավական կանխավարկածը իրավական տեխնիկայի միջոց է, որով իրավական ակտում ամրագրվում է հնարավոր ենթադրություն, որը համարվում է ճշմարիտ, եթե ապացուցված են օրենքով սահմանված համապատասխան փաստերը, և ապացուցված չեն այն հերքող հանգամանքները:

3. Իրավական ֆիլցիան իրավաբնական տեխնիկայի միջոց է, որն ամրագրվում է նորմատիվ իրավական ակտի տեքստում և օժտված է այնպիսի հիմնական հատկանիշներով, ինչպիսիք են կեղծ բնույթը, անհերքելիությունը, իրացման հատուկ մեխանիզմը, կիրառման հատուկ նպատակը:

4. Իրավական կանխավարկածների կիրառման դեպքում անհրաժեշտ է օգտագործել «ենթադրվում է» բառը, իսկ իրավական ֆիլցիաների կիրառման դեպքում «համարվում է» բառը:»:

Առաջարկվող լրացումը իրավական նորմերի մոդելավորման տեսանկյունից կունենա ուղղորդիչ նշանակություն: Այս լրացումամբ հնարավոր կլինի ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտը իրավական կանխավարկածների և ֆիլցիանների կիրառման առումով ենթարկել համակարգային և համապարփակ կարգավորման: Առաջարկվող կարգավորումը իրավական կանխավարկածների և ֆիլցիանների տարանջատման համատեքստում, անկասկած, հանգեցնելու է գործող իրավական ակտերում իմաստային-եզրուբաբանական հստակեցման (կիրառվող բառերի հստակեցման/փոփոխման):

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Ազգային ժողով. ՀՀ *աշխատանքային օրենսգիրք*. 9 նոյեմբերի, 2004. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172153>
2. ՀՀ Ազգային ժողով. «Այօրինի ծագում ունեցող գույքի բնագանձման մասին» ՀՀ օրենք. 16 ապրիլի, 2020. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=168414>
3. ՀՀ Ազգային ժողով. ՀՀ *քաղաքացիական դատավարության օրենսգիրք*. 09 փետրվարի, 2018. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172555>
4. ՀՀ Ազգային ժողով. ՀՀ *քաղաքացիական օրենսգիրք*. 05 մայիսի, 1998. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172116>
5. ՀՀ Ազգային ժողով. ՀՀ *քրեական օրենսգիրք*. 05 մայիսի, 2021. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172528>
6. ՀՀ Ազգային ժողով. ՀՀ *քրեական դատավարության օրենսգիրք*. 30 հունիսի, 2021. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172538>
7. Մխիթար Գոշ. *Ղախատանագիրք, Գ խմբագրությանը*, 1184:
8. Бабаев, Владимир. *Теория современного советского права: фрагменты лекций и схемы*. Н. Новгород, 1991.
9. Дормидонтов, Григорий. *Классификация явлений юридического быта, относимых к случаям применения фикций*. Казань, 1895.
10. Зайцев, Игорь. *Правовая фикция в гражданском процессе // Российская юстиция*. М. – 1997. – № 1.
11. Зацепина, Олеся. *Правовые презумпции и правовые фикции: соотношение и развитие*, диссертация, афтореферат. М., 2022. <https://www.dissercat.com/content/pravovye-prezumpcii-i-pravovye-fiktsii-sootnoshenie-i-razvitiie/read>
12. Каминская, Вера. *Учение о правовых презумпциях в уголовном процессе*. — М., 1948.
13. Качур, Нина. *Презумпции в советском семейном праве*: дис. ... канд. юрид. наук. Свердловск. 1982.
14. Левенталь, Якоб. *К вопросу о презумпциях в советском гражданском процессе // Советское государство и право*. — 1948. — № 6.
15. Малинин, Василий. *Энциклопедия уголовного права. Том 4. «Состав преступления»* СПб., 2005.

16. Мосин, Сергей. *Презумпции и принципы в конституционном праве российской Федерации*. Москва, 2009.
17. Мейер, Дмитрий. *О юридических вымыслах и предположениях, о скрытых и притворных действиях*. Казань. – 1854.
18. Танимов, Олег. *Развитие фикций в Новейшее время (опыт России) // История государства и права*. 2014. N 16.
19. Черданцев. Александр. *Логико-языковые феномены в праве, юридической науке и практике*. Екатеринбург. 1993.
20. Fuller, Lon Luvois. "Legal Fictions", *Illinois Law Review* (Vol. XXV No. 4, December 1930).
21. Harmon, Louise. *Falling Off the Vine: Legal Fictions and the Doctrine of Substituted Judgment*, *The Yale Law Journal* <https://digitalcommons.law.yale.edu/cgi/viewcontent.cgi?article=7300&context=yjl>
22. Maine, Henry. *Ancient Law*, Boston, Beacon Press.; 1963; <http://www.thelatinlibrary.com/law/maine.html>
23. Mashruwala, Parita. *Legal Fictions: Do they fit the Juristic Reality?* *International Journal of Legal Science and Innovation*. 2020.
24. Vaihinger, Hans. *The Philosophy of «As If»: A System of the Theoretical, Practical and Religious Fictions of Mankind*. C.K. Ogden trans., London: Routledge & Kegan Paul, 1924.

#### WORKS CITED

1. ՀՀ Ազգային շոհոհով. *ՀՀ օրենսգրքի 9 նոյեմբերի, 2004*. [RA National Assembly: RA Labor Code: November 9, 2004.], (In Armenian). <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172153>
2. ՀՀ Ազգային շոհոհով. *Ափորինի տսգում անետս'վոհ գույկ'ի Բրնագանդզման մասին ՀՀ օրենք*. 16 Ապրիլի, 2020. [Law of the Republic of Armenia "On Confiscation of Property of Illegal Origin". April 16, 2020.], (In Armenian). <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=168414>
3. ՀՀ Ազգային շոհոհով. *ՀՀ կ'աղակ'ատս'ական ճատարտ'յան օրենսգրքի*. 09 ք'ետրվարի, 2018. [RA Civil Procedure Code. February 9, 2018.], (In Armenian). <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172555>
4. ՀՀ Ազգային շոհոհով. *ՀՀ կ'աղակ'ատս'ական օրենսգրքի*. 5 Մայիսի, 1998. [RA Civil Code: May 5, 1998.], (In Armenian). <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172116>
5. ՀՀ Ազգային շոհոհով. *ՀՀ կ'րեական օրենսգրքի*. 5 Մայիսի, 2021. [RA Criminal Code: May 5, 2021.], (In Armenian). <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172528>
6. ՀՀ Ազգային շոհոհով. *ՀՀ կ'րեական ճատարտ'յան օրենսգրքի*. 30 հունիսի, 2021. [RA Criminal Procedure Code. June 30, 2021.], (In Armenian). <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172538>
7. Մխիտ'ար Գոշ. *ճատստանագրքի, Գ Խմբագրտ'յան*, 1184 տ'. [Book of Judgments, edition C, 1184.], (In Armenian).
8. Բաբայեւ, Վլադիմիր. *Տեորիա սուրեմենոգո սուետսկոգո քրաւա: ֆրագմենտյ Լեկտսիյ Ի սԽեմյ*. Ն. Նուգորոդ, 1991. [The Theory of Modern Soviet Law: Fragments of Lectures and Diagrams. Novgorod, 1991], (In Russian).
9. Դորմիտոնով, Գրիգորիյ. *Կլասսիֆիկատսիյա յաւլենիյ յուրիճեսկոգո Բյա, տնոսիմյԽ կ Տլուճայամ քրիմենենիյա ֆիկտսիյ*. Կազան', 1895. [Classification of the Phenomena of Legal Life Related to the Cases of the Use of Fictions. Kazan, 1895], (In Russian).



10. Zaytsev, Igor'. *Pravovaya fiktsiya v grazhdanskom protsesse* // *Rossiyskaya yustitsiya*. – 1997. – № 1. [Legal fiction in Civil Proceedings // Russian justice. Moscow, - 1997. - No. 1.], (In Russian).
11. Zatsepina, Olesya. *Pravovyye prezumptsii i pravovyye fiktsii: sootnosheniye i razvitiye, dissertatsiya, aftoreferat*. 2022. [Legal Presumptions and Legal Fictions: Correlation and Development, dissertation, abstract. Moscow, 2022.], (In Russian).
12. Kaminskaya, Vera. *Ucheniye o pravovykh prezumpsiyakh v ugovnom protsesse*. — M., 1948. [The Doctrine of Legal Presumptions in Criminal Proceedings. - Moscow, 1948.], (In Russian).
13. Kachur, Nina. *Prezumptsii v sovetskom semeynom prave*: Dis. kand. yurid. nauk. Sverdlovsk. 1982. [Presumptions in Soviet Family Law: Dis. legal sciences. Sverdlovsk. 1982.], (In Russian).
14. Levental', Yakob. *K voprosu o prezumpsiyakh v sovetskom grazhdanskom protsesse* // *Sovetskoye gosudarstvo i pravo*. — 1948. — № 6. [On the Issue of Presumptions in the Soviet Civil Procedure // Soviet State and Law. Moscow - 1948. - No. 6.], (In Russian).
15. Malinin, Vasiliy. *Entsiklopediya ugovnogo prava*. Tom 4. «Sostav prestupleniya» SP, 2005. [Encyclopedia of Criminal Law. Volume 4. "Corpus delicti" SP, Sankt Petersburg, 2005], (In Russian).
16. Mosin, Sergey. *Prezumptsii i printsipy v konstitutsionnom prave rossiyskoy Federatsii*. Moskva, 2009. [Presumptions and Principles in the Constitutional Law of the Russian Federation. Moscow, 2009], (In Russian).
17. Meyyer, Dmitriy. *O yuridicheskikh vymyslakh i predpolozheniyakh, o skrytnykh i pritivnykh deystviyakh*. Kazan'. – 1854. [About Legal Fictions and Presumptions, about Covert and Feigned Actions. Kazan. - 1854.], (In Russian).
18. Tanimov, Oleg. *Razvitiye fiktsiy v Noveysheye vremena (opyt Rossii)* // *Istoriya gosudarstva i prava*. 2014. N 16. [The Development of Fictions in Modern Times (Experience of Russia) // History of State and Law. Moscow, 2014. No. 16.], (In Russian).
19. Cherdantsev. Aleksandr. *Logiko-yazykovyye fenomeny v prave, yuridicheskoy nauke i praktike*. Yekaterinburg. 1993. [Logical and Linguistic Phenomena in Law, Legal Science and Practice. Yekaterinburg. 1993.], (In Russian).
20. Fuller, Lon Luvois. "Legal Fictions", Illinois Law Review (Vol. XXV No. 4, December 1930).
21. Harmon, Louise. *Falling Off the Vine: Legal Fictions and the Doctrine of Substituted Judgment*, The Yale Law Journal, <https://digitalcommons.law.yale.edu/cgi/viewcontent.cgi?article=7300&context=yjlj>
22. Maine, Henry. *Ancient Law*, Boston, BeaconPress.; 1963; <http://www.thelatinlibrary.com/law/maine.html>
23. Mashruwala, Parita. *Legal Fictions: Do they fit the Juristic Reality?* International Journal of Legal Science and Innovation. Madhya Pradesh, India, 2020.
24. Vaihinger, Hans. *The Philosophy of «As If»: A System of the Theoretical, Practical and Religious Fictions of Man\_kind*. C.K. Ogden trans., London: Routledge & Kegan Paul, 1924.

## THEORETICAL AND PRACTICAL APPROACHES TO DISCOVERING THE ESSENCE OF LEGAL PRESUMPTIONS AND FICTIONS

**GEVORG BARSEGHYAN**

*Yerevan State University, Law faculty, Chair of criminal law, Ph.D. Student  
Assistant to Deputy Prime Minister,  
Yerevan, the Republic of Armenia*

**MARINA MAKYAN**

*Yerevan State University, Law Faculty, Magistrate,  
RA Constitutional Court Justice, Assistant  
Yerevan, the Republic of Armenia*

For the emergence of legal consequences, in addition to real factual circumstances, legally permissible assumptions about factual circumstances - legal presumptions and fictions - are of great importance.

Inadequate study of the characteristics and correlation of presumptions and fictions causes difficulties in law-making and law-enforcement practice. The difficulty in distinguishing these two phenomena is due to the fact that they are quite similar and closely related.

The purpose of this article is to investigate the characteristics and correlation of legal fictions and presumptions. In order to achieve the set goal, the following main tasks were identified:

- to study the nature of legal presumptions and fictions, highlighting their commonalities and features,
- to study the relationship between legal presumptions and fictions,
- to develop of proposals aimed at fixing presumptions and fictions in legal acts and improving their application in practice.

The subject of the study was examined with the use of general and special scientific methods, such as dogmatic, comparative legal, logical and legal modelling.

As a result of the conducted research, a number of conclusions were made, the main contents of which are as follows:

Legal presumption and fiction perform similar functions in the process of legal regulation. Their existence is due to the need to overcome the gaps in the legislation, to eliminate uncertainty in public relations. The meaning of the existence of legal fictions and presumptions is to create, with the help of an assumption, a legal consequence that would normally result from an event or action, they replace legal facts in the service of overcoming uncertainty. Fiction and presumption are beyond reality. They do not exist in the real world, but they are an integral part of the legal reality.

At the same time, the analysis of their relationship has shown that, despite existing similarities, these normative generalizations are different. A presumption is rebuttable, and the assumption to be asserted is probable, while a fiction is irrefutable, and a proposition defined by a fiction is false. Presumption is inductive in nature, in the form of incomplete induction, and fiction is deductive. The purpose of using fiction is to recognize as true a assumption that is consciously inconsistent with reality, which does not pursue the goal of establishing the truth, its main purpose is to regulate those relations that cannot be regulated in any other way. Presumptions establish a necessary legal fact based on the probability of its existence.

Based on the results of the research was proposed to supplement the Law of the Republic of Armenia on Normative Legal Acts with a new article on the use of legal presumptions and fictions. The proposed addition will have a guiding significance from

the point of view of modeling legal norms. With that addition, it will be possible to subject the legislative and sub-legislative field to systematic and comprehensive regulation in terms of the application of legal presumptions and fictions.

**Keywords:** *legal presumption, legal fiction, normative generalization, legal reality, overcoming uncertainty, legal technique, assumption, probability, rebuttable/irrefutable nature.*

## ТЕОРЕТИКО-ПРАКТИЧЕСКИЕ ПОДХОДЫ К РАСКРЫТИЮ СУЩНОСТИ ПРАВОВЫХ ПРЕЗУМПЦИЙ И ФИКЦИЙ

**ГЕВОРГ БАРСЕГЯН**

*аспирант кафедры уголовного права юридического факультета  
Ереванского государственного университета,  
помощник вице-преьера Республики Армения,  
г. Ереван, Республика Армения*

**МАРИНА МАКЯН**

*магистр юридического факультета  
Ереванского государственного университета,  
помощник судьи Конституционного суда Республики Армения,  
г. Ереван, Республика Армения*

Для возникновения правовых последствий, помимо реальных фактических обстоятельств, имеют значение и юридически допустимые предположения о фактических обстоятельствах - юридические презумпции и фикции.

Недостаточное изучение особенностей и соотношения презумпций и фикций создаёт трудности в правотворческой и правоприменительной практике.

Целью данной статьи является исследование особенностей и соотношения юридических фикций и презумпций. Для достижения поставленной цели были определены следующие основные задачи:

- изучение природы правовых презумпций и фикций, выделение их общих черт и особенностей,
- изучение соотношения правовых презумпций и фикций,
- разработка предложений, направленных на закрепление презумпций и фикций в правовых актах и улучшение их применения на практике.

Объект и предмет исследования рассматривались с применением таких общих (общенаучных) и специальных методов научного познания, как догматический, сравнительно-правовой, логический и правового моделирования.

В результате проведённого исследования сделан ряд выводов, основное содержание которых сводится к следующему.

Правовая презумпция и правовая фикция выполняют аналогичные функции в процессе правового регулирования. Их существование обусловлено необходимостью преодоления пробелов в законодательстве, устранения неопределённости в общественных отношениях. Смысл существования правовых фикций и презумпций состоит в том, чтобы с помощью допущения вызвать юридическое последствие, обычно возникающее в результате события или действия: они заменяют юридические факты, служа преодолению

неопределённости. Презумпция и фикция вне реальности. они не существуют в реальном мире, но являются неотъемлемой частью правовой реальности.

Вместе с тем анализ их взаимосвязи показал, что при существующих сходствах эти нормативные обобщения различны. Презумпция опровергаема, фиксируемое предположение носит вероятностный характер, в то время как фикция неоспорима, а суждение, установленное фикцией, ложно. Презумпция имеет индуктивный характер в виде неполной индукции, а фикция - дедуктивный. Цель применения фикции в сознательном признании ложного суждения истинным: это не преследует цели установления истины, ее основная цель - регулирование тех отношений, которые не могут быть урегулированы иным образом. Презумпции устанавливают необходимый правовой факт, исходя из вероятности его существования.

По результатам проведённого исследования предложено дополнить закон Республики Армения «О нормативных правовых актах» новой статьёй о применении правовых презумпций и фикций. Предлагаемое дополнение будет иметь руководящее значение в процессе моделирования правовых норм. С помощью предлагаемого дополнения законодательную и подзаконную сферу можно будет подвергнуть систематическому и всестороннему регулированию при применении правовых презумпций и фикций.

**Ключевые слова:** *юридическая презумпция, юридическая фикция, нормативное обобщение, юридическая реальность, преодоление неопределённости, юридическая техника, предположение, вероятность, опровергаемый/неоспоримый характер.*